ԽՈՍՐՈՎ ԵՐՐՈՐԴ ՄԵԾ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԱՐՔԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՀՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանում թագավորած Արշակունիների ծննդաբանության, ժամանակագրության, գահաժառանգման կարգի, գահակալման ժամանակի ու կատարած գործերի մասին տեղեկությունները սուղ են: Արշակունիների մասին քիչ բան է հայտնի ընդհանրապես, թեև նրանք շուրջ 450 տարի իշխել են Իրանում և 600 տարուց ավելի՝ Մեծ Հայքում: Պարզված և հիմնավորված չէ, թե III դարում Մեծ Հայքում Խոսրով Մեծ անունով քանի՞ թագավոր է գահակալել[1]: Մասնավորապես, վիճարկվում է Խոսրով Մեծ Երրորդ Արշակունու գոյությունը: Նրա անձը նույնացվում է Մեծ Հայքի արքա Խոսրով Առաջինի, Խոսրով Երկրորդի, Տրդատ Երկրորդի հետ: Նրա գահակալման ժամանակահատվածի, զոհվելու ժամանակի մասին նշվում են տարբեր, երբեմն ոչնչով չհիմնավորված թվականներ[2]: Այն թագավորի, որի մասին իր «Հայոց պատմության» սկզբում պատմում է Ագաթանգեղոսը, և որին Մովսես Խորենացին իր գրքում համարում է քրիստոնեահալած[3]:

Դրա համար, առանց պարզելու, թե մ. թ. III դարում քանի՞ Խոսրով անունով թագավոր է եղել և երբ՝ անհնար է պարզել Խոսրով Երրորդ Մեծ Արշակունու տեղը

---

[1] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 2, Երևան, 1984, էջ 21–80, Հ. Գ. Ժամկոչյան, Ա. Գ. Աբրահամյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան. Հայ ժողովրդի պատմություն, 4 հատորով, հ. 1, Երևան, 1963, էջ 240–252, 282–286, Լ. Ե. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 353–359, 397–428, Ս. Տ. Երեմյան. Հայաստանը և վերջին Պարթև Արշակունիների պայքարը Հռոմի դեմ.– ՊԲՀ, 1977, №4, էջ 59–72, Ա. Ա. Մարտիրոսյան. Սասանյանները և Հայաստանի քաղաքական շրջադարձը երրորդ դարում.– ՊԲՀ, 1979, № 1, էջ 45–58, նույնի՝ Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը.– ՊԲՀ, 1977, № 1, էջ 195–206, Է. Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն, Երևան, 2008, էջ 67–74, Լ. Շահինյան. Մովսես Խորենացի, պատմություն և ժամանակագրություն, Երևան, 1989, Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, 1957, էջ 33–136:*

[2] *Տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., հ. Բ, էջ 64–65, Հայոց պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 63–65, Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), խմբ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972, էջ 110:*

[3] *Տե՛ս Ագաթանգեղոս. Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 24–35, Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 258:*

նրանց շարքում, ճշգրտել նրա գահակալման ու սպանվելու ժամանակի հարցը: Խորենացին որպես III դարի Մեծ Հայքի թագավոր է հիշատակում ընդամենը երկու Արշակունի թագավորի՝ մեկ Խոսրովի և մեկ Տրդատի (որոնցից Խոսրովը հենց Խոսրով Երրորդ Մեծն է, իսկ Տրդատը՝ Տրդատ Երրորդ Մեծը)[4]: Հ. Մանանդյանը, հենվելով օտարազգի ու հայ պատմիչների հիշատակումների վրա և յուրահատուկ մեկնաբանելով դրանք, գտնում է, որ III դարում Մեծ Հայքում «…իշխել են, իրապես, հինգ թագավորներ հետևյալ հերթականությամբ՝ Խոսրով Ա, Տրդատ Բ, Արտավազդ, Խոսրով Բ (Երկրորդ) և Տրդատ Գ»[5]: Ըստ նրա՝ Խոսրով Առաջինը գահակալել է 198–216 թվականներին: Նրանից հետո թագավորել է Տրդատ (Տիրիդատ) Բ-ն, որը գահակալել է 216 /217–252 /253 թվականներին՝ թագ ստանալով հռոմեական կայսր Մակրինոսից (217–218): Տրդատ Բ-ին հաջորդել է Արտավազդը՝ թագավորելով 252 /253–272/ 273 թթ.: Խոսրով Բ-ն էլ, որը, ըստ նրա, III դարում թագավորած հայոց վերջին Խոսրով Արշակունին է և Տրդատ Երրորդի հայրը, գահակալել է 272 /273–287 թթ.[6]: Դրանցից նա Տրդատ Բ-ին համարում է Խոսրով Բ-ի, իսկ վերջինիս՝ Տրդատ Գ-ի (Երրորդի, Մեծի) ծնողը և գտնում, որ Խոսրով Երրորդ թագավոր չի եղել: Արտավազդին էլ Արշակունի չի համարում: Հ. Մանանդյանի համար պարզ չէ նաև, թե ով է նա և ինչ հիմքերով է թագավորել Մեծ Հայքում[7]: Այդ դարի հայոց արքաների շարքում նա չի հիշատակում նաև Որմիզդ-Արտաշիր Սասանյանին ու նրա որդի Որմզդակին: Իսկ նրանք նույնպես եղել են հայոց թագավորներ:

Լեոն, ընդհանրապես ժխտում է Խոսրով Առաջին թագավորի գոյությունը: Կարակալա (198–215 / 216 թթ.) հռոմեական կայսրն էլ, ըստ նրա, 215 /216 թթ. բանտարկած է եղել ոչ թե հայոց Վաղարշ Արշակունի թագավորի որդի Խոսրով Առաջին թագավորին, այլ հենց այդ Վաղարշին: Տրդատ Երկրորդ թագավորը, որը եղել է վերջինիս որդին, ըստ նրա՝ գահակալել է 215 /216–222 թվականներին: Այս Տրդատ Երկրորդի մահից անմիջապես հետո՝ 222 թվականին, գահ է բարձրացել Արշակը, որը եղել է Իրանի թագավոր Արտավան V եղբայրը: Նա էլ հայոց ապագա թագավոր Տրդատ Երրորդ Մեծի հայրն է, III դարի միակ Խոսրով անունով հայ թագավորը, որին այդ երկրորդ անունը շնորհվել է որպես պատվանուն: Այդ Արշակ-Խոսրով արքան էլ թագավորել է մինչև 238 թվականը և զոհվել Ագաթանգեղոսի նկարագրած հանգամանքներում[8]: Տարիներ հետո նրան Մեծ Հայքի գահին փոխարինել է որդին՝ Տրդատ Երրորդ Մեծը,

---

[4] *Տե՛ս Մովսես Խորենացի. նշվ. աշխ., էջ 252–259, 262–263, 268–292, Հ. Մանանդյան. նշվ. աշխ., հ. Բ, էջ 76:*

[5] *Տե՛ս Հ. Մանանդյան. նշվ. աշխ., հ. Բ, էջ 76, 99:*

[6] *Տե՛ս նույն տեղում, էջ 50–51, 55, 58–62, 73–78, 80, 84–85, 88–89, 90–91, 93, 95, 99–109, 112, 115–116, 118–119, 123, 138, 423–424:*

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ 64–65:*

[8] *Տե՛ս Լեո. նշվ. աշխ., հ. 1, էջ 353–359, 397–402, 517–518:*

որն էլ Գրիգոր Լուսավորչի հետ, մեր բնորոշմամբ, Մեծ Հայքում իրականացրել է քրիստոնեական մեծ հեղափոխությունը:

«Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի ակադեմիական հրատարակության հեղինակները Տրդատ Երրորդ Մեծ թագավորի հայր Խոսրովին նույնացնում են Խոսրով Առաջինի (ի տարբերություն Լեոյի, ընդունում են, որ նման թագավոր իսկապես եղել է) որդի Տրդատ Երկրորդի հետ, վերջինիս կոչում Տրդատ-Խոսրով Երկրորդ, իսկ նրանից հետո կամ նրան զուգահեռ Մեծ Հայքի որևէ մասում թագավորած որևէ Խոսրով Երկրորդի և Խոսրով Երրորդի գոյությունը հերքում: Այդ հեղինակները ենթադրում են, որ Տրդատ-Խոսրով Երկրորդը գահակալել է Մեծ Հայքում Խոսրով Առաջինից (191–215 կամ 198–215 /216) հետո, 216 /217–256 թթ. (և ոչ թե 216 /217–222 թթ., ինչպես կարծում է Լեոն): Նրանց կարծիքով, այդ ժամանակահատվածում Մեծ Հայքը, փաստորեն, բաժանված է եղել իրանական ու հռոմեական մասերի, և այս «մեծ» թագավորը՝ դուրս մղվելով Մեծ Հայքի ավելի մեծ՝ իրանական մասից, թագավորել է դրա ավելի փոքր՝ հռոմեական մասում: Այնտեղ էլ նա սպանվել է Անակի կողմից 256 թվականին: Խոսրով անունն էլ, իբր, եղել է այդ Տրդատ-Խոսրով Երկրորդի ոչ թե անունը, այլ տիտղոսը, պատվանունը, որը նշանակում է «բարեհամբավ, հռչակավոր, անվանի կամ թագավոր»: Թե ինչու՞ է նա կոչվել կամ կարող էր կոչվել Խոսրով, այն է՝ «Բարեհամբավ», «հռչակավոր» կամ «Մեծ»՝ այդպես էլ չի բացատրվում[9]: Երկիր կորցրած և որևէ մեծագործություն չկատարած թագավորին այդպես կարելի էր կոչել միայն ծաղրանքով, իսկ այստեղ խոսքը ողբերգության մասին է: Նրանք մոռանում են նաև, որ Խոսրով Մեծը սպանվել է ոչ թե Արևմտյան Հայաստանի Զրմես կամ Ծումինա ավանում[10], այլ Վաղարշապատի միջնաբերդում, որը գտնվում է Արևելյան Հայաստանում: Ապագա Տրդատ Երրորդ Մեծն էլ Հռոմ է տարվել Վաղարշապատից[11], և ոչ թե Զրմեսից (Ծումինա): Օտարոտի են Գ. Խալաթյանցի դատողությունները և գնահատականները Մ. Խորենացու, նրա «Հայոց պատմության», մասնավորապես այս Խոսրովի մասին[12], որոնք այստեղ չեն քննարկվելու:

«Հայ ժողովրդի պատմության» չորսհատորյակում Տրդատ Երրորդ Մեծի ծնող է ճանաչվում Խոսրով Մեծը, որը, ըստ այդ դասագրքի հեղինակների, «հավանաբար»,

---

[9] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 2, էջ 25, 40, 44, 59:*

[10] *Զրմես կամ Ծումինա ավանը գտնվել է Մեծ Հայքի Եկեղյաց գավառում, որը հարակից է Փոքր Հայքին և այդ ժամանակ ակնհայտորեն գտնվելիս է եղել հռոմեացիների իշխանության տակ: Հակառակ դեպքում հայոց թագավորն ու նրա արքունիքն այնտեղ գտնվել չէին կարող: Զրմեսի կամ Ծումինայի տեղի մասին տե՛ս Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Ստ. Տ. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Հ. Խ. Բ ա ր ս ե ղ յ ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 870, հ. 4, Երևան, 1988, էջ 236, 276:*

[11] *Տե՛ս Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. նշվ. աշխ., էջ 30–33:*

[12] *Տե՛ս* Г. Х а л а т я н ц. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, ч. 1. М., 1903, с. 128–131.

պետք է թագավորած լինի 273–287 թվականներին[13]: Մ. Ներսիսյանի խմբագրած «Հայ ժողովրդի պատմություն» դասագրքի հեղինակներն էլ, հետևելով Հ. Մանանդյանին, գտնում են, որ III դարում Մեծ Հայքում թագավորել են ոչ թե մեկ, այլ երկու Խոսրովներ: Ըստ նրանց՝ Խոսրով Ա-ն նախորդել, իսկ Խոսրով Բ-ն հաջորդել է Տրդատ Երկրորդին՝ գահակալելով 272 /273–287 թվականներին: Այդ մասին բառացիորեն գրված է հետևյալը. «271–273 թթ., կայսր Ավրելիանոսի կատարած արշավանքի ժամանակ, Հայաստանի արևմտյան մասում հռոմեացիների օգնությամբ գահ է բարձրանում Տրդատ 2-ի որդի Խոսրով 2-ը»[14]: Վերջինիս էլ դասագրքի հեղինակները համարում են Տրդատ Երրորդ Մեծի ծնող: Միայն թե նրանք, ինչպես նաև՝ Հ. Մանանդյանը, իրենց հարց չեն տվել, թե 287 թվականին Հռոմ տարված մանուկ Տրդատը ինչպե՞ս կարող էր 10–13 տարում փայլուն կրթություն ստանալ, մասնակցել հունական օլիմպիական խաղերին, դառնալ չեմպիոն, զորակցել հռոմեացիներին արևմտյան և արևելյան ճակատներում նրանց մղած մի քանի պատերազմներին, և հետո էլ, դառնալով Մեծ Հայքի թագավոր, 301 թ. իրականացնել քրիստոնեական մեծ հեղափոխությունը: Ավելորդ չի լինի նշել, որ ոչ միայն այս, այլև բոլոր վերոնշյալ կարծիքները և դիրքորոշումները բավարար չափով հիմնավորված ու տրամաբանական չեն, հետևաբար, գիտական չեն: Այս ամենը հանգեցնում է նույնիսկ Հայաստանում կատարված քրիստոնեական մեծ հեղափոխության ժամանակի հարցի վիճարկմանը:

Հր. Սիմոնյանի խմբագրությամբ լույս տեսած «Հայոց պատմություն» դասագրքի հեղինակները նույնպես գտնում են, որ մ. թ. III դարում Մեծ Հայքում գահակալել է ընդամենը մեկ Խոսրով, և դա եղել է Խոսրով Առաջին Մեծը: Նա թագավորել է 211–259 թվականը՝ գահը ժառանգելով իր ծնող Վաղարշակ Երկրորդ Արշակունուց, որը, իբրև, գահակալել է 186–211 թթ. ու զոհվել կովկասցիների դեմ մղած կռիվներից մեկում: Այդ Խոսրով Մեծն էլ նրանց կողմից համարվում է Տրդատ Երրորդ Մեծ թագավորի հայրը, որի սպանությունը նկարագրել է Ագաթանգեղոսը: Իսկ ինչու՞ է այդ Խոսրով Մեծը թագավորել նշված և ոչ թե մեկ այլ ժամանակ ու զոհվել 259 թվականին, որևէ փաստարկ կամ հիմնավորում դասագրքում չի բերվում[15]: Տրդատ Երրորդ Մեծի հորը Տրդատ Ա է կոչում նաև Ա. Մուշեղյանը[16]:

Նախ և առաջ նշենք, որ Մեծ Հայքի Խոսրով Առաջին Արշակունի թագավոր իսկապես եղել է, բայց նա ամենևին էլ Խոսրով Մեծը և Տրդատ Երրորդ Մեծ Արշակունու ծնողը չէ: Նրան խաբեությամբ՝ իբրև իր տղաների հետ հաշտեցնելու համար, 215

---

[13] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 4 հատորով, հ. 1, էջ 249:*

[14] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), խմբ. Մ. Գ. Ներսիսյանի, էջ 109–110:*

[15] *Տե՛ս Հայոց պատմություն, խմբ. Հր. Ռ. Սիմոնյանի, էջ 64–65:*

[16] *Տե՛ս Ա. Մ ո ւ շ ե ղ յ ա ն. Հինգերորդ դարի հայ մատենագրության ժամանակագրական նոր դասակարգումը.– «Գրականագիտական հանդես», 2012, -ԺԳ (13), էջ 87–100:*

/216 թ. Անտիոք է հրավիրել Կարակալա (198–215/216 թթ.) հռոմեական կայսրը, որն Արևելք էր եկել Իրանի դեմ պատերազմելու համար: Եվ ելնելով այդ պատերազմի անհրաժեշտությունից՝ նա բանտարկել է Հայոց այս թագավորին, որը շուտով բանտում մահացել է: Հավանական է, որ նա բանտարկվել, և գուցե զոհվել է բանտում՝ չցանկանալով միանալ հռոմեացիներին և պատերազմել իր տոհմակից Իրանի Արշակունի թագավորների դեմ: Բացի այդ, Մեծ Հայքը իրանական կոնֆեդերացիայի (համադաշնության) սուբյեկտ էր (մինչև 224 թ.՝ Սասանյան Արտաշիրի թագավորելը), և Խոսրով Առաջին թագավորը նման արարք, այն է՝ թշնամու կողմն անցնելով, փաստորեն, կատարում էր պետական դավաճանություն: Նման արարք մինչ այդ չի կատարել և ոչ մի Արշակունի հայ թագավոր: Կարակալան չէր էլ կարող նման դավաճանություն ակնկալել Հայոց թագավորից: Եվ նա, իր մոտ հրավիրելով Խոսրով Առաջին թագավորին, նպատակ է ունեցել ոչ թե նրան հակել իր կողմը, հաշտեցնել իր որդիների հետ կամ էլ Մեծ Հայքում թագավորեցնել մեկ այլ Արշակունու, այլ մեկուսացնել նրան, դրանով իսկ թուլացնել Իրանը, հաղթել նրան պատերազմում, որից հետո վերացնել Հայոց թագավորությունը և այն վերածել հռոմեական նահանգի:

Կարակալային հաջորդած կայսր Օփիլիոս Մակրինոսը (217–218), որն էլ եղել է նրա սպանության կազմակերպիչը՝ զղջալով իր նախորդի կատարած ստոր արարքի համար, Մեծ Հայքի թագավոր է ճանաչել բանտում մահացած Խոսրով Առաջինի որդուն՝ Տրդատ Երկրորդին՝ նրան ուղարկելով թագ: Այլ կերպ նա չէր կարող վարվել, քանզի պատերազմելու ուժ, ինչպես նաև Մեծ Հայքը հռոմեական նահանգի վերածելու հնարավորություն չուներ: Կայսրը հույս ուներ այդպես պաշտպանվել հայերից, որոնք Խոսրով Առաջինի բանտարկությունից հետո հարձակվել և պարտության էին մատնել հռոմեացիներին: Այս ամենի մասին պատմում է Դիոն Կասիոսը, ընդ որում՝ հայոց Խոսրով Առաջին թագավորի որդի Տրդատ Երկրորդին կոչելով Տիրիդատես և ոչ թե Խոսրով[17]: Եվ նրա այս տեղեկությունը կասկածի ենթարկելու հիմքեր, ինչպես նաև հակառակն ապացուցելու հնարավորություններ՝ չունենք:

Խոսրով անունը, ինչպես ասվեց, նշանակում է «անվանի, հռչակավոր, բարեհամբավ», բայց Տրդատ Երկրորդ թագավորը որպես պատվանուն նման տիտղոս չի կրել: Դա պատմականորեն հիմնավորված չէ: Նրան Խոսրով կամ Տրդատ-Խոսրով անվանող ժամանակագիր չկա: Ենթադրությունն այն մասին, որ նման անվանակոչությունը կարող էր և կատարվել է՝ հետևելով Իրանի թագավոր Շապուհ Առաջինի (241–272) կողմից իր որդիներին «Խոսրով» անվանակոչելու օրինակին, ինչպես դա անում են «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի հեղինակները՝ անհիմն է: Վեր-

---

[17] *Տե՛ս* Дион Кассий. Римская история, кн. VXIV–LXXX. Пер. с древнегреч., под ред. А. В. Махлаюка. СПб., 2001, с. 291–292. *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 475:*

ջինս իսկապես էլ իր չորս որդիներին «Խոսրով» պատվանունն է շնորհած եղել[18]: Բայց ամբողջ հարցն այն է, որ այս հայ թագավորը սկսել է գահակալել Շապուհ Առաջինից շուրջ 20 տարի առաջ: Նա նաև պատերազմել է Շապուհ Առաջինի ու նրա որդի Որմիզդ-Արտաշիրի դեմ, Շապուհ I-ի կողմից 252 կամ 253 թ. զրկվել իր թագավորությունից: Եվ դուրս մղվելով Մեծ Հայքի հռոմեական մասից, որտեղ թագավորում էր, նա բնակություն է հաստատել Հռոմին պատկանող Զրմես (Ծումինա) ավանում, որտեղ էլ մահացել է: Այդ մասին Թ. Մոմզենը գրում է, որ 252 կամ 253 թ. իրանական զորքերի հարձակման հետևանքով Հայաստանի «օրինական թագավոր Տրդատը փախավ հռոմեացիների մոտ, իսկ թագավորական ընտանիքի մնացած անդամներն անցան պարսիկների կողմը»[19]: Սա հենց այդ Տրդատ Երկրորդ Արշակունին է, և չէր կարող լինել մեկ ուրիշը: Ուրիշը չի եղել[20]: Նման պայմաններում կարո՞ղ էր արդյոք այս թագավորն ընդօրինակել իր մահացու թշնամի, ապօրինաբար իշխանության եկած (այն է՝ ապստամբության միջոցով, որը զրադաշտական իրավունքով նախատեսված ամենածանր հանցագործություններից է) և Հայաստանն ավերող Սասանյան թագավորների վարքագծի նմուշները, նրանց անունները կամ պատվանունները: Մանավանդ, որ նման պատվանունները ոչ թե թագավորներն էին իրենք իրենց շնորհում, այլ նրանց կից ատյանը կամ աշխարհաժողովը: Հայոց այդ թագավորին կից ատյանի կողմից նրան նման կոչում շնորհելը քիչ հավանական է: Նա ոչինչ չի կատարել նման կոչում վաստակելու համար: Սասանյաններն էլ նշված ժամանակ ատելի են եղել Հայաստանում, և նրանց վարքագիծը, հատկապես՝ նրանցից բազմապատիկ տուժած Արշակունիների համար, օրինակելի չէին կարող լինել:

Հաջորդ կարևոր հարցը, որը կարող է Արշակունիների ծննդաբանական շղթայի ամբողջությունը վերականգնելու համար օգտակար լինել և նպաստել Խոսրով Երրորդ Մեծ Արշակունու գահակալման հետ կապված առեղծվածը պարզելուն, այն է, թե արդյոք այդ Տրդատ Երկրորդ թագավորը եղել է ամբողջ Մեծ Հայքի, թե՞ դրա մի մասի թագավորը: Այս հարցը ծագում է ինքնաբերաբար, քանզի պատմության մեջ հիշատակումներ կան նաև այդ նույն ժամանակ Մեծ Հայքում գահակալած մեկ այլ Արշակունի թագավորի մասին, որի անունը նույնպես եղել է Խոսրով: Նրան Լեոն

---

[18] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, 8 հատորով, հ. 2, էջ 25:*

[19] *Տե՛ս* Т. М о м м з е н. История Рима, т. 4. Ростов-на-Дону, 1997, с. 332.

[20] *Կարելի է ենթադրել նաև, որ այս դրվագը նման է այդ նույն Տրդատ և նրա եղբայրների՝ 215/216 թվականներին կատարած փախուստին Անտիոքից՝ Կարակալա կայսեր կողմից նրանց ծնող Խոսրով Առաջինին բանտարկելուց հետո: Բայց դա այդպես չէ: Ըստ Թ. Մոմզենի՝ այս թագավորը 252 կամ 253 թվականին փախուստի է դիմել ոչ թե հռոմեացիներից (Կարակալայից), այլ պարսիկներից՝ Շապուհ Առաջինից և նրա որդի Որմիզդ-Արտաշիրից: Ընդ որում՝ ոչ թե Անտիոքից, ինչպես որ եղել էր առաջին անգամ, այլ Մեծ Հայքից (իրականում՝ դրա հռոմեական մասից), որտեղ նա 217 թվականից թագավորում էր:*

կոչում է Արշակ, որը, ըստ նրա՝ գահ է բարձրացել 222 թվականին և համարվել Իրանի արքայից արքա Արտավան Հինգերորդի Արշակունու եղբայրը: Ինչպես տեսանք, «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի հեղինակները այս խորհրդավորությամբ պատած հարցը լուծել են՝ նշված երկու թագավորների անձերը մեկի մեջ միավորելու և նրան Տրդատ-Խոսրով կոչելու միջոցով: Բայց այդ պարզունակ հնարքով հայ Արշակունիների ծննդաբանության շղթան ոչ թե ամբողջանում, այլ խաթարվում է: Մանավանդ, որ այս Խոսրովն է երբեմն ոմանց կողմից համարվում Տիրիդատ Երրորդ Մեծի հայր՝ կոչվելով Խոսրով Երկրորդ:

Հ. Մանանդյանն ընդունում է այն իրողությունը, որ, իրոք, պատմական աղբյուրներում Տրդատ Երկրորդ թագավորին զուգահեռ որպես Մեծ Հայքի թագավոր է հիշատակվում մեկ այլ անձ ևս՝ Խոսրով Մեծ անունով: Նա, իբրև, «...թագավորել է Հայաստանում Ալեքսանդր Սեվերոսի (222–235) իշխանության առաջին տարում»՝ սկսած 222 թվականից, և «իր եղբոր վրեժն առնելու համար ավելի քան տասը տարի կռվել է Արտաշիրի դեմ»: Հ. Մանանդյանը նշում է նաև, որ, ըստ որոշ աղբյուրների, այդ Խոսրովը եղել է Իրանի թագավոր Արտավան Հինգերորդ Արշակունու եղբայրը և Մեծ Հայքում թագավոր է նշանակված եղել նրա կողմից: Բայց, այնուամենայնիվ, նա թերահավատորեն է վերաբերում այդ բոլոր տեղեկություններին և գտնում է, որ նշված ժամանակ Արշակ կամ Խոսրով անունով այլ թագավոր չի եղել, և այդ տեղեկությունը կարող էր վերաբերել ավելի վաղ ապրած «հայոց Խոսրով Ա թագավորին, որը, իսկապես, ազգական էր պարթևաց Վաղարշ Դ թագավորի (191–208), ուրեմն՝ և Արտավան Ե-ի, որը Վաղարշ Դ-ի եղբայրն էր»[21]:

Իրականում Իրանի արքայից արքա Վաղարշ Դ-ն եղել է Արտավան Հինգերորդի և նրա հակառակորդ ու եղբայր Վաղարշ Հինգերորդի ու Մեծ Հայքում Արտավան Հինգերորդի կողմից թագավոր նշանակված Խոսրով Երկրորդի հայրը: Եվ Զենոբ Գլակի (Հովհան Մամիկոնյանի) հաղորդումն այն մասին, որ Վաղարշ թագավորի որդի հայոց Խոսրով թագավորն իր եղբայր Արտավանի վրեժն առնելու համար կռվել է Արտաշիրի դեմ, միանգամայն համապատասխանում է իրականությանը: Նա նկատի է ունեցել այն հանգամանքը, որ հայոց այդ Խոսրով Երկրորդն իսկապես էլ եղել է հենց Իրանի Վաղարշ Չորրորդ թագավորի որդին և Արտավան Հինգերորդի եղբայրը: Հայոց Խոսրով Առաջին թագավորի հոր անունը նույնպես եղել է Վաղարշ, բայց այդ Վաղարշը հայոց Վաղարշ Երկրորդ թագավորն է, որը զոհվել է լեռնականների դեմ մղված մարտերում և որի մասին արդեն իսկ նշվել է: Այս երկու Խոսրովներին վերաբերող վերոհիշյալ փաստերն էլ շփոթություն են առաջացրել որոշ պատմաբանների, այդ թվում՝ Հ. Մանանդյանի մոտ: Իսկ Զենոբ Գլակի մոտ շփոթություն առկա է միայն Խոսրով Երկրորդ և Խոսրով Երրորդ (Տրդատ Երրորդի հոր) թագավորների, և ոչ թե

[21] *Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., հ. Բ, էջ 74–75:*

հայոց Խոսրով Առաջին ու Խոսրով Երկրորդ թագավորների անձերի միջև[22]: Ինչ վերաբերում է Ագաթանգեղոսին և Խորենացուն, ապա նրանք միաձայն պատմում են Խոսրով Երրորդի, այն է՝ Տրդատ Երրորդ Մեծի ծնողի և Տրդատ Երկրորդի որդու, և ոչ թե Արտավան Հինգերորդի եղբայր Խոսրով Երկրորդի մասին:

Առկա սուղ փաստերի հիման վրա (այդ թվում՝ Հ. Մանանդյանի և Լեոյի կողմից քննարկված ու անհիմն կերպով հավաստի չհամարված) կարելի է գալ այն հետևությանը, որ 217/222 թվականներից Մեծ Հայքի տարբեր մասերում համարյա միաժամանակ սկսել են գահակալել երկու թագավորներ՝ Տրդատ Երկրորդը և Խոսրով Երկրորդը: Եվ եթե այդ ժամանակ հռոմեական կայսր Օփիլիոս Մակրինոսը Մեծ Հայքի թագավոր է նշանակել գերության մեջ մեռած հայոց թագավոր Խոսրով Առաջինի որդուն՝ «հռոմեասեր» Տրդատ Երկրորդին, ապա Իրանի իշխանություններն էլ այդ նույն ժամանակ և ի պատասխան դրա՝ երկրի թագավոր են նշանակել Արտավան Հինգերորդի եղբորը՝ Խոսրով Երկրորդին: Իսկ քանի որ Մեծ Հայքը Իրանական կոնֆեդերացիայի մաս էր, դրա սուբյեկտ, ուստի հռոմեական կայսեր նման ապօրինի քայլը նշանակում էր այդ երկրի զավթում: Դա, փաստորեն, պատերազմ հայտարարելու ակտ էր, որն էլ անմիջապես վերսկսվեց:

Տրդատ Երկրորդ թագավորի գահակալումը, ըստ Աշակունիների գահակալման օրենքի, ինչպես նաև ըստ պարթևական և հռոմեական պետությունների միջև մ. թ. 62 թ. կնքված Ռանդեայի պայմանագրի, նշանակման պահից անօրինական էր: Ըստ այդ պայմանագրի՝ հռոմեացիներն իրավունք չունեին Մեծ Հայքի կամ դրա որևէ մասի վրա թագավորներ նշանակել ընդհանրապես: Նրանք կարող էին միայն Իրանի Արշակունյաց թագավորների կողմից որպես Մեծ Հայքի թագավոր առաջադրված անձի թեկնածությունը մերժել կամ հավանություն տալ:

Խոսրով Երկրորդին Մեծ Հայքի թագավոր նշանակելը սկզբունքորեն նույնպես ապօրինի էր: Իրանի Արշակունի թագավորները և նրանց կից ատյանը՝ Մեծ Հայքի թագավոր նշանակելիս վերջինիս թեկնածությունը, համաձայն Ռանդեայի պայմանագրի, պետք է նախապես համաձայնեցնեին հռոմեական իշխանությունների հետ[23]:

Այսպիսով, թեև կցկտուր, բայց արժանահավատ տվյալներ կան այն մասին, որ համարյա միևնույն ժամանակամիջոցում Մեծ Հայքում գահակալել են երկու տարբեր Արշակունի թագավորներ՝ Խոսրով Երկրորդը և Տրդատ Երկրորդը: Իսկ դա էլ իր հերթին նշանակում է, որ Մեծ Հայքը Իրանի ու Հռոմի միջև բաժանված է եղել ոչ թե երեք անգամ՝ 244, 276 և 384/387 թվականներին, ինչպես ընդունված է, այլ՝ չորս: Եվ

---

[22] *Տե՛ս* Հովհան Մամիկոնյան. *Տարոնի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1989, էջ 31–32, 150:*

[23] *Տե՛ս* Т. Моммзен. *Նշվ. աշխ., էջ 239, 254, 289, 293,* А. А. Степанян. Рандейский договор и коронация Тиридата Аршакида в Риме.– ИФЖ, 1976, ¹ 3, с. 171–183*:*

այդ երկրի առաջին բաժանումը նշված կայսրությունների միջև տեղի է ունեցել ոչ թե 244 թ., այլ 217/222 թթ.: Այլ կերպ, առանց այդ երկրի բաժանման, երկու թագավորներ չէին կարող այնտեղ միաժամանակ գահակալել: Բուն այդ բաժանման մասին ուղղակի տվյալներ չկան, բայց ապացույցներ կան այս թագավորների միաժամանակյա նշանակման և այն մասին, որ Հռոմի կայսր Օ. Մակրինոսի ու Արտավան Հինգերորդի միջև՝ կարճատև պատերազմից հետո, «հաճույքով» խաղաղության համաձայնագիր է կնքվել: Դրա մասին վկայում է Հուլիոս Կապիտոլինոսը[24]: Այդ համաձայնագրով էլ Մեծ Հայքը կիսվել է այս երկու թագավորների միջև, ճանաչվել են նրանց ավատական իրավունքները, և վերջիններիս իշխանությունը օրինականացվել է: Հասկանալի է, որ Խոսրով Երկրորդ թագավորը ստացել է Մեծ Հայքի արևելյան, իսկ Տիրիդատ Երկրորդը՝ արևմտյան մասը:

Հաջորդ ապացույցն այն մասին, որ Մեծ Հայքի հիմնական կամ մեծ մասում 217/222– 237/238 թթ. Տրդատ Երկրորդին զուգահեռ և միաժամանակ թագավորել է Խոսրով Երկրորդ անունով թագավոր, հետևյալն է. Արտաշիր Առաջին Սասանյանը (224–239/242), որն իշխանության էր եկել Իրանը կենտրոնացնելու և Աքեմենյանների կայսրությունը վերականգնելու կոչերով ու հավակնություններով, փորձեր է կատարել Մեծ Հայքը ամբողջությամբ Իրանին կցելու ուղղությամբ: Եվ, հատկապես՝ դրա այն (արևելյան) մասը, որում թագավորում էր Խոսրով Երկրորդը, և որը մինչև 224 թիվը համարվել է Իրանական կոնֆեդերացիայի մաս: Բայց Խոսրով Երկրորդը, փաստորեն, իր եղբայր Արտավան Հինգերորդի մահից հետո դարձել էր անկախ պետության թագավոր՝ դուրս գալով Իրանի կազմից: Նա չէր կարող ենթարկվել ապստամբության միջոցով իշխանության եկած, Արշակունիների կայսրությունը կործանած և նրանց երդվյալ թշնամի Սասանյան Արտաշիր Առաջինին: Վերջինս 228, 230–234 թվականներին հարձակվել է Մեծ Հայքի վրա, բայց պարտվել է: Դրությունը կտրուկ փոխվել է 237/238 թվականներին, երբ Խոսրով Երկրորդ Արշակունին մահացել կամ սպանվել է: Դրանից հետո միայն՝ 237–242 թթ., Մեծ Հայքի այն մասը, որտեղ թագավորել էր նա, զավթվել և կցվել է Իրանին: Հավանական է նաև, որ այս Խոսրովը Արտաշիրի դեմ մղած պայքարի արդյունքում արժանացած լինի «Մեծ» կոչմանը:

Պարսիկները 253 թ. գրավել են նաև Մեծ Հայքի մյուս՝ հռոմեական մասը[25], որից հետո Տրդատ Երկրորդ «հռոմեասեր» թագավորը փախել է Փոքր Հայքին կցված Եկեղյաց գավառի Չրմես (Ծումինա) ավան, հաստատվել այնտեղ: Այնտեղ էլ, երկուերեք տարի ապրելուց հետո, մահացել է՝ այդպես էլ ոչինչ չանելով «Մեծի» տիտղոս վաստակելու համար: Խոսրով Երրորդ Մեծն այս Տրդատ Երկրորդի որդին է, որը նույնպես իր ծնողի հետ դուրս է մղված եղել Մեծ Հայքից:

---

[24] *Տե՛ս* Юлий Капитолин. Опилий Макрин.–Властители Рима, пер. С. П. Кондратьева, под ред. А. И. Доватора. М., 1992, гл. 15, с. 42.

[25] *Տե՛ս* Т. Моммзен. *Նշվ. աշխ.,* p. 332.

Հաստատվելով Զրմեռում՝ նրանք Իրանի դեմ պատերազմը շարունակել են Հռոմի իշխանությունների աջակցությամբ՝ իրենց գործողությունները համակարգելով հռոմեական զորքերի, նրանց վասալ այլ պետությունների ու դաշնակիցների հրամանատարության հետ: Այդ պատերազմում ապագա Խոսրով Երրորդ Մեծը Իրանի դեմ կռվել է դեռևս թագաժառանգ եղած ժամանակ, և դա՝ մինչև հռոմեական կայսր Պուբլիոս Ավրելիոս Լիկինիոս Վալերիանոսի (253–260) 257 թ. Արևելք գալը: Ըստ Խորենացու, ոմն Խոսրով ժամանակին դիմել է հռեոմեական Ֆիլիպ Արաբ կայսրին (244–249)՝ Իրանի դեմ պատերազմելու մեջ իրեն աջակցելու համար: Վերջինս անմիջական օգնություն ցույց չի տվել, բայց հարևան իշխանություններին հրամայել է «բոլոր կողմերից» աջակցել Խոսրովին՝ «սկսած Եգիպտոսից մինչև Պոնտոսի ծովեզրյա կողմերը»[26]: Եվ եթե այդ Ֆիլիպ կայսեր տիրակալության օրոք նման անունով հայ թագավոր չի եղել, ապա պատերազմող հայկական զորքերի հրամանատար կարող էր և լինել: Եվ դա, կարծում ենք, եղել է ապագա Խոսրով Մեծը, որի մասին էլ, ինչպես տեսնում ենք, վկայություն կա:

Հայտնի է, որ Վալերիանոս կայսրը այդ պատերազմում Եդեսիայի մոտ 259 թ. գերվել է պարսիկների կողմից, ապա մահացել՝ ենթարկվելով ստորացումների ու տանջանքների: Նրա զորքը պարտվել և նահանջել է, իսկ Հռոմեական կայսրությունը՝ տարածքային լուրջ կորուստներ կրել: 260 թ. կայսր է օծվել Վալերիանոսի որդի Գալենոս (Գաղիանոս) Պուբլիոս Լիկինիոս Վալերիանոս Իգնատիոսը (260–268)[27]: Նա չէր կարող իր ծնողի հետ կատարվածի համար պարսիկներին ներել: Վալերիանոսի հետ տեղի ունեցածը հարվածում էր ոչ միայն նոր կայսեր, այլև Հռոմեական պետության հեղինակությանը և պատերազմի հիմնավոր պատճառ հանդիսանում: Բայց բանն այն է, որ Իրանի դեմ պատերազմող հռոմեական զորքը ջախջախվել էր, և նրանք տարածաշրջանում մեծ բանակ չունեին ու չէին կարող ունենալ: Այդ ժամանակ գահակալական ծանր կռիվներ էին տեղի ունենում Հռոմեական պետության կենտրոնում, և նույնքան ծանր պատերազմ՝ նրա արևմտյան սահմաններում, գոթերի դեմ: Դրա համար էլ Գալենոսը որոշում է Իրանի դեմ պատերազմը շարունակել Արևելքի տեղական թագավորների ուժերով: 260 /261 թ. նա և Հռոմի սենատը Պալմիրայի (Թադմոր) տիրակալ Սեպտիմիոս Օդենատոսին ճանաչել են Պալմիրայի թագավոր: Վերջինիս տրվել է նաև «Վերականգնող Արևելքի» տիտղոսն ու նշանակվել կայսրության արևելյան զորքերի գլխավոր հրամանատար:

Բայց մինչև թագավոր ճանաչվելն էլ Օդենատոսը՝ սկսած 240 թվականից, եղել է Պալմիրայի ու դրա շրջակա սիրիական (ասորական) տարածքների և քաղաքների տերն ու կառավարիչը: Հենց այդ ժամանակներից էլ նա ներգրավված է եղել պարսից դեմ մղվող պատերազմների մեջ: Իսկ 260 թվականից, Գալենոսի կայսր դառնալուց

[26] *Տե՛ս Մովսես Խորենացի. նշվ. աշխ., էջ 253–255:*

[27] Трибеллий Поллион. Двое Галиенов.– Властители Рима, гл. XII, с. 201–209.

հետո, Օդենատոսը շարունակել է այդ պատերազմն ու վճռական մի շարք հաջողությունների հասել: Պարսիկներից ազատագրվել են Եդեսիան, Մծբինը, Խառանը, գրավվել է Տիզբոնը և ամբողջ հայկական ու իրանական Միջագետքը, ինչպես նաև Մեծ Հայքն ամբողջությամբ: Այդ առիթով Թ. Մոմզենը նշում է. «Ամենայն հավանականությամբ, այդ ժամանակ (264 թ.) Հռոմին է վերադարձվել (Օդենատոսի կողմից – U. Խ.*) նաև Հայաստանը»*[28]*:*

Եթե Թ. Մոմզենն ավելի ուշադիր լիներ հայկական աղբյուրների նկատմամբ, ապա նա հավաստի կիմանար, որ այդ ժամանակ Մեծ Հայքն իսկապես էլ ազատագրվել է, և դա ոչ թե Օդենատոսի, այլ նաև նրա զորակցությամբ պատերազմող Խոսրով Երրորդ Մեծ թագավորի կողմից: Վերջինս էլ «Մեծ» է կոչվել, ըստ երևույթին, հենց այդ մեծագործության համար: Գլխավոր կռվող ուժերն էլ այդ պատերազմում եղել են հայկական: Պալմիրան եղել է փոքր, խառը բնակչություն ունեցող քաղաք-պետություն և ոչ թե արաբական, ինչպես ենթադրվում է, այլ սիրիական (ասորական)[29]*: Եվ դա ոչ միայն այն պատճառով, որ այնտեղ հայտնաբերված արձանագրություններն արամեերեն (ասորերեն) լեզվով են և ոչ թե արաբերեն*[30]*, այլ քանի որ արաբները քաղաքաբնակ չեն եղել և քոչվոր ցեղեր էին: Բայց, Պալմիրայի զորքը հիմնականում կազմված է եղել արաբներից, որոնք Արաբական թերակղզուց Միջագետք թափանցելով՝ այնտեղ ծառայում էին որպես վարձու զինվորներ*[31]*:*

Ագաթանգեղոսը Խոսրով Երրորդ Մեծի արշավանքների մասին խոսելիս նրա հետ դաշնակցած զորքերը կոչում է «տաճկական»: Նա ուղղակիորեն հայտնում է, որ պարսիկների դեմ մղած պատերազմի ժամանակ այս հայոց թագավորին օգնության է եկել տաճկաց զորքը[32]*: Ինչպես գիտենք, արաբներին ժամանակին այդպես են կոչել: Սա ծանրակշիռ ապացույց է այն բանի, որ իսկապես էլ Խոսրով Երրորդ Մեծ թագավորը կռվել է Իրանի դեմ՝ պալմիրացիների հետ զինակցած: Արաբական ուժեր այդ տարածաշրջանում ու դարաշրջանում չեն գործել պարսիկների դեմ՝ ամբողջ III դարի ընթացքում, բացի այս դեպքից:*

Ագաթանգեղոսի և Խորենացու նկարագրություններից պարզ է դառնում, որ, իսկապես, հայկական զորքերի ու նրանց հրամանատար Խոսրով Երրորդ Մեծի դերն այդ պատերազմի ելքի համար վճռական է եղել: Նրանց վկայությամբ այս թագավո-

---

[28] *Տե՛ս* Т. Моммзен. *Նշվ. աշխ., էջ 335:*

[29] *Տե՛ս* Э. Бикерман. Государство Селевкидов. М., 1985, с. 107, 152–153, 158.

[30] *Տե՛ս նույն տեղում, էջ 107, 152, 153, 158;* Н. В. Пигулевская. Арабы у границ Византии и Ирана в IV–VI вв. М.–Л., 1964, с.. 22–23;. она же. История Ирана с древнейших времен до конца XVIII в. Л., 1958, с. 42–43..

[31] *Տե՛ս* Т. Моммзен. *Նշվ. աշխ., էջ 257, 335, 337,* Н. В. Пигулевская. История Ирана с древнейших времен до конца XVIII в. с. 42–43; она же. Арабы у границ Византии и Ирана в IV–VI вв. с. 22–23.

[32] *Տե՛ս Ագաթանգեղոս. նշվ. աշխ., էջ 28:*

ը 11 տարի ամենամյա հաղթական արշավանքներ է կատարել Իրանի դեմ Միջագետքում (Օդենատոսի զորքն այնտեղ էր կռվում) և զոհվել է Իրանի արքունիքում կազմակերպված դավադրության հետևանքով: Ըստ հռոմեական աղբյուրների, այդ ժամանակ Իրանի դեմ մղվող պատերազմը՝ սկսած Վալերիանոսի Արևելք գալուց, նույնպես տևել է շուրջ 11 տարի և ավարտվել Օդենատոսի, ինչպես նաև Գալենոսի խորհրդավոր սպանությամբ: Նրանք երեքն էլ զոհվել են դավադրության հետևանքով, և համարյա միևնույն ժամանակ: Ընդ որում, այն դավադրության, որի պլանի մշակման ընթացքն Իրանի ատյանում ճշգրտորեն վերարտադրել է Ագաթանգեղոսը[33]: Արտաշիրը (նույն Որմիզդ-Արտաշիրն է՝ Շապուհ Առաջինի որդին), ատյանի նիստին ներկայացել է վախեցած, խուճապահար: Հանդես գալով ճառով՝ նա ասել է, որ Իրանը ջախջախված է, մասամբ նվաճված ու մահացու վտանգի մեջ[34]:

Արտաշիրը առաջարկում է միջոցներ գտնել հայոց թագավորին սպանելու և այդ կերպ՝ Իրանը փրկելու: Նման միջոց գտնողին նա խոստանում է իր թագավորության կեսը, «պատիվներ» և երկրորդ գահ: Այդպիսի առաջարկ է ըստ էության արվում Խոսրով Երրորդ Մեծի ազգական Անակ Արշակունուն: Հայոց պատմագրության մեջ դա համարվել է հեքիաթային, Ագաթանգեղոսի կողմից թույլ տրված բանաստեղծական չափազանցություն: Այնինչ պատմիչի ողջ հաղորդածը համապատասխանում է պատմական ճշմարտությանը: Որմիզդ-Արտաշիրը, ըստ հռոմեական աղբյուրների, 265–267 թթ. շատ լուրջ պարտություններ է կրել. հայերն ու հռոմեացիները գրաված են եղել Մեծ Հայքը, Միջագետքն իր մեծ քաղաքներով՝ Մծբինով, Եդեսիայով հանդերձ: Գրավվել է Իրանի մայրաքաղաք Տիզբոնը, և անմիջական վտանգ է ծագել ամբողջ պետության վերացման համար: Նման պայմաններում նա, գտնվելով ծայրահեղ դժվար կացության մեջ, ստիպված էր և կարող էր նման ստոր միջոցների դիմել, քանզի այլ միջոցներ նրա տրամադրության տակ չէին մնացել:

Պետք է նաև ասել, որ Անակին տված Որմիզդ-Արտաշիրի խոստումները չի կարելի ֆանտաստիկ համարել: Իրականում նա կարող էր դրանք կատարել՝ երկրորդ գահ շնորհելով Անակին, որպիսին հանդիսանում էր Մեծ Հայքի գահը Իրանում, որի թագավորը ոչ վաղ անցյալում, մինչև դրա գրավված լինելը հայերի կողմից, եղել էր ինքը՝ Որմիզդ-Արտաշիրը: Այս կապակցությամբ պետք է հիշատակել Արտավազդ Հինգերորդ Արշակունուն ու ապագա Խոսրով, Վռամշապուհ և Արտաշես (Արտաշիր) Արշակունիներին ու նրանց թագավորելու հանգամանքները: Նրանք, ըստ Արշակունիների ծննդաբանական օրենքի, Մեծ Հայքում գահակալման իրավունք փաստորեն չունենալով, չլինելով Արշակունիների թագավորող ընտանիքի հարազատության ներկայացուցիչներ, պարսիկ արքաների կողմից նշա-

[33] *Տե՛ս նույն տեղում, էջ 25–33:*

[34] Трибеллий Поллион. *Նշվ. աշխ., գլուխ X–XIII, էջ 222–228,* М. Грант. *Նշվ. աշխ., էջ 195–201,* Т. Моммзен. *նշվ. աշխ., էջ 335, Ագաթանգեղոս. նշվ. աշխ., էջ 28:*

նակվել և թագավորել են այնտեղ: Այդ նույն կարգով այնտեղ կարող էր թագավոր նշանակվել նաև Անակ Արշակունին: Ըստ ամենայնի, Մեծ Հայքում նույնպես եղել է երկրորդ աթոռ (գահ): Դա եղել է Ատրպատականի կամ Մարաստանի գահը: Անակին կարող էր խոստացված լինել նաև Պարթևստանի կամ մեկ այլ՝ Իրանական կոնֆեդերացիայի սուբյեկտ հաղիսացող երկիր:

Վրացական մի աղբյուրում նշում կա այն մասին, որ Անակը պատրաստ է եղել Հայոց թագավորին սպանել նույնիսկ առանց շահադիտական դրդումների, պարսից թագավորի նկատմամբ սիրուց դրդված[35]: Ստանալով համապատասխան երաշխիքներ՝ նա մեկնել է Հայոց թագավորի արքունիքի ձմեռոց հանդիսացող Խաղխաղ քաղաք (Ղազախ, այժմյան Ադրբեջանի կազմում է), որտեղ գտնվելիս է եղել Խոսրով Երրորդ Մեծը: Այնտեղ նա, հալածական ձևանալով, շահել է Հայոց թագավորի վստահությունը: Եվ երբ գարնանը արքունիքը Խաղխաղից տեղափոխվել է Վաղարշապատ մայրաքաղաք՝ Անակն իր ընտանիքով արքունիքի հետ տեղափոխվել է այնտեղ, որտեղ էլ դավադրաբար սպանել է հայոց Խոսրով Երրորդ Մեծ թագավորին: Ընդ որում, դա տեղի է ունեցել գարնանը, երբ թագավորն արդեն զորահավաք էր հայտարարել՝ նորից դեպի Իրան արշավելու համար: Բայց առայժմ պարզ չէ, թե դա Անակի՝ հայոց թագավորի մոտ «փախչելուց» հետո որերո՞րդ գարնանն է եղել:

Իսկ ո՞ր թվականին կարող էր տեղի ունենալ Իրանի ատյանի վերոհիշյալ նիստը և ե՞րբ է տեղի ունեցել Խոսրով Երրորդի ու Օդենատոսի և Գալենոսի սպանությունը: Մեր կարծիքով, ատյանի նիստը կարող էր տեղի ունենալ 265 թ. աշնանը: Այդ թվականը պատերազմի ընթացքում ամենածանրն է եղել Իրանի համար, և նա կանգնած է եղել լիակատար ջախջախման եզրին: Աշնանը, քանզի պատերազմական տարվա արդյունքներն ամփոփվում էին տարվա այդ եղանակին, երբ պատերազմական ակտիվ գործողությունները սովորաբար դադարում էին մինչև գարուն: Գիտենք, որ Արշակունիները և Սասանյանները պատերազմել են մինչև աշուն և ձմռանը չեն պատերազմել: Կարծում ենք, նաև, որ Հայոց թագավորի սպանությունն էլ կատարվել է 268 թ. գարնանը: Իսկ ինչու՞ հենց այդ թվականին: Այսպես. ճշգրտորեն հայտնի է, որ Օդենատոսն սպանվել է 267 թ. ձմռանը: Ըստ Մ. Խորենացու, Անակը հայոց թագավորին սպանել է նրա մոտ գտնվելու երրորդ տարում («երկու տարի անցած՝ երրորդումը»[36]), այն է՝ 268 թ. գարնանը, Օդենատոսի սպանությունից մի քանի ամիս հետո: Դա նշանակում է, որ ատյանը կայացած է եղել 265 թ. աշնանը: Անակը, ըստ Ագաթանգեղոսի, սպանությունը կատարել է՝ «հանկարծ հիշելով» Արտաշիրին տված իր

---

[35] *Տե՛ս Քարթլիս Ցխովրեբա.– Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 490–491:*

[36] *Տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1997, գիրք 1-ին, գլ. ՀԴ, էջ 185–186:*

երդումը[37]: Այդ խոսքերը պատահական չեն: Դա նշանակում է, որ Օդենատոսի սպանությունից հետո, որը տեղի է ունեցել Խոսրով Երրորդ Մեծի սպանությունից երկուերեք ամիս առաջ, դավադրության կազմակերպիչները նրան հիշեցրել են ատյանում երդումով վերցրած պարտականության մասին: Անակի համար այդ քայլին դիմելու ազդանշան կարող էր ծառայել նաև Օդենատոսի սպանության լուրը: Բոլոր դեպքերում Հայոց թագավորի սպանությունն իրականացվել է հապճեպ, Անակի ու նրա ընտանիքի համար անբարենպաստ պայմաններում: Այնքան հապճեպ, որ փախուստի ապահով ուղիներ չեն նախապատրաստվել, որի հետևանքով Անակն ու նրա ողջ ընտանիքը, բացի Սուրբ Գրիգորից ու նրա եղբորից, կոտորվել է: Դրան պետք է ավելացնել, որ թագավորը սպանվել է խաղաղ պայմաններում, Վաղարշապատում, որտեղ մինչև 253–258 թթ. ոչ Տրդատ Երկրորդ–»Խոսրովը», ինչպես ոմանք կարծում են, ոչ էլ Խոսրով Երրորդ Մեծը պարզապես գտնվել չէին կարող, քանզի այդ տարածքները նշված ժամանակ եղել են պարսիկների տիրապետության տակ:

Ինչպես արդեն ասվել է, Խոսրով Երրորդ Մեծը Մեծ Հայքի թագավոր է հռչակվել իր ծնողի՝ Տրդատ Երկրորդի մահվանից հետո: Վերը նշված պատմաբանների ճնշող մեծամասնության կարծիքով՝ նրա հայր Տրդատ Երկրորդը մահացել է Չրմես ավանում, 252–253/256 թվականներին: Մեր կարծիքով, Խոսրով Երրորդին թագադրել ու նրա գահակալման իրավունքը հատուկ արարողակարգով ճանաչել է հռոմեական կայսր Պուբլիոս Ավրելիոս Լիկինիոս Վալերիանոսը: Ավելի մեծ ճշտությամբ նրա թագավորելու տարվա մասին որևէ բան ասել հնարավոր չէ: Իսկ նրա զոհվելու տարեթվի մասին կարելի է որոշակիորեն ասել, որ դա տեղի է ունեցել 268 թ. գարնանը:

Իսկ ինչպե՞ս պարզաբանել Մ. Խորենացու այն հաղորդումը, ըստ որի Խոսրովը (որը, իհարկե, Խոսրով Երրորդ Մեծն է) սպանվել է 48 տարի թագավորելուց հետո: Այստեղ մենք գործ ունենք Խոսրով Մեծի ու նրա ծնող Տրդատ Երկրորդի գահակալման տարեթվերը միմյանց գումարելու իրողության հետ, և նման փաստը միակը չէ Խորենացու մոտ: Այդպես ընդունված է եղել ամբողջ Արևելքում: Աննշան թագավորի գահակալման տարեթվերը գումարվել են նրան նախորդած կամ հաջորդած նշանավոր թագավորի գահակալման տարեթվերին: Խոսրով Երրորդ Մեծի մահվան տարեթվից՝ 268 թվականից, 48 տարի հանելու դեպքում ստանում ենք 220 թվականը, որը շատ մոտ է նրա ծնողի՝ Խոսրով Երկրորդի թագավորման տարեթվին: Մանավանդ, որ Խորենացին նրա ծնողի գահակալման սկիզբ կարող էր համարել ոչ թե Օ. Մակրինոսի կողմից նրան թագավորեցնելու տարեթիվը (217), այլ այն տարեթիվը, երբ Իրանի արքայից արքա Արտավան Հինգերորդը և Իրանի ատյանը նրան ճանաչել են Մեծ Հայքի մի մասի թագավոր, որը կարող էր լինել 220–222 թթ. (Իսկ Արտավան Հինգերորդի հետ Մեծ Հայաստանը բաժանողը՝ կայսր Բասեանոսը

[37] *Տե՛ս Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. նշվ. աշխ., էջ 30:*

և ոչ թե Մակրինոսը): Բացի այդ, Խոսրով Երրորդ Մեծը ակնհայտորեն քաղաքական և ռազմական գործերի մեջ է ներգրավված եղել երիտասարդ տարիքում: Նա եղել է իր ծնողի գահակիցը, փոխարքան ու հայոց զորքերի հրամանատարը (հռոմեական կայսր և զորավար Ֆիլիպ Արաբի զինակիցը ինչպես 244 թվականից հետո, այնպես էլ առաջ, որի մասին արդեն իսկ նշվել է): Մոտավորապես այդպիսի պաշտոններ և լիազորությունների շրջանակ է ունեցել Որմիզդ-Արտաշիրը՝ ստացած իր հայր Շապուհ Առաջինից: Այդ դարաշրջանի հռոմեական բոլոր կայսրերն իրենց որդիներին կամ ժառանգներին հայտարարել են կայսր և իրենց գահակից:

Որ Խոսրով Երրորդ Մեծը թագավորել է հենց այս և ոչ թե մեկ այլ ժամանակահատվածում, վկայում է նաև Խորենացու հաղորդած այն փաստը, որ Տրդատ Մեծի հայր Խոսրով Մեծը հետապնդել է քրիստոնյաներին[38]: Այդ առթիվ պետք է ասել, որ Վալերիանոս Իգնատիոս կայսրը [ինչպես նաև նրանից 100 տարի հետո թագավորած (360–363) Վալերիանոս Ուրացող կայսրը] հայտնի է եղել որպես քրիստոնյաներին դաժանաբար հալածող: Արևելք գալով 257 թ. և արշավանք սկսելով Իրանի դեմ՝ նա կազմակերպել է քրիստոնյաների զանգվածային հալածանքներ ու կոտորածներ՝ նույնը պարտադրելով իրենից կախում ունեցող թագավորներին: Անկասկած, այս կայսեր օրինակով կամ էլ պարտադրանքով և այդ նույն ժամանակ՝ Խոսրով Մեծը նույնպես հալածանք է սկսել Մեծ Հայքում պատսպարված քրիստոնյաների դեմ, որի մասին էլ ուղղակիորեն հիշատակում է Խորենացին: Պատմահոր այս վկայությունը ապացույց է նաև այն բանի, որ 258–259 թթ. Խոսրով Երրորդ Մեծն արդեն իսկ նվաճած է եղել Մեծ Հայքը: Այլ կերպ և այլ ժամանակ նա (կամ մեկ այլ հայ թագավոր՝ նրանից առաջ) չէր կարող Մեծ Հայքում քրիստոնյաներին հալածանքների ենթարկել: Օրինակ՝ Խոսրով Երկրորդի թագավորման օրոք Հռոմի կայսր Ալեքսանդր Սեվերոսը (222–235), որը պատերազմելիս է եղել Արտաշիր Առաջինի զորքերի դեմ Միջագետքում և Հայաստանում՝ քրիստոնյաներին հալածող չի եղել: Համենայն դեպս, 232–233 թվականներին՝ Իրանի դեմ պատերազմի ժամանակ, նա նման հալածանքներով աչքի չի ընկել: Ավելին, իր տանը, աստվածների արձանների շարքում, նույնիսկ պահելիս է եղել, Քրիստոսի պատկերը կամ կիսանդրին[39]: Հետևաբար, Խորենացին՝ գրելով Տրդատ Երրորդի հայր Խոսրովի կողմից քրիստոնյաներին հալածելու մասին, նկատի է ունեցել հենց նշված Խոսրով Երրորդ Մեծի կողմից և տվյալ ժամանակաշրջանում քրիստոնյաներին հալածելու մասին: Այդ թագավորը կարող էր քրիստոնյաների դեմ հալածանքներն սկսել նաև ոչ թե Վալերիանոսի թելադրանքով, այլ ինքնուրույն՝ զրադաշտականության հիմքերն ամրապնդելու և ազ-

---

[38] *Տե՛ս* Մ. Խ ո ր ե ն ա ց ի. *Հայոց պատմություն, 1981, էջ 258:*

[39] *Տե՛ս* Римские императоры. Биографический справочник правителей Римской империи (31 до н. э. – 476 н. э.). М., 1998, с. 159; Г е р о д и а н. *Նշվ. աշխ., գիրք 6, գլ. 8, էջ 60:*

գի ուժերը մեծ պատերազմի շեմին կոնսոլիդացնելու համար և ոչ թե օրինակ վերցնելով հռոմեացիներից կամ նրանց պարտադրանքով:

… Պալմիրայի թագավոր Արշակունի[40] Օդենատոսը սպանվել է 267 թ. Սիրիայում գտնվող Էմեսիա (այժմ՝ Հոմս) տաճարական քաղաքում, իր հորեղբորորդի Մեոնիոսի կողմից: Դա անվիճելի փաստ է, բայց որևէ հեղինակի կողմից հիշատակում չկա այն մասին, թե տարվա ո՞ր եղանակին կամ ամսին է նա զոհվել: Եթե նա եկել էր Էմեսիա, ապա կա՛մ կրոնական որևէ ծես կատարելու, կա՛մ էլ որևէ աստծու նվիրված տոնախմբության մասնակցելու համար: Էմեսիան գտնվել է Իրանի դեմ պատերազմի ճակատային գծից շատ հեռու, խորը թիկունքում, Պալմիրա քաղաքից շուրջ 150 կմ հեռավորության վրա, այդ վասալ-պետության կազմում: Պատերազմի ժամանակ Էմեսիայում, այսինքն՝ խոր թիկունքում գտնվելն արդեն իսկ խոսում է այն մասին, որ Օդենատոսը, վերադարձած լինելով իրանական ճակատից, զորքին հանգիստ տալու համար, այստեղ եղել է խոր աշնանը կամ ձմռանը: Տարվա այլ եղանակի նա Էմեսիայում գտնվել չէր կարող: Նա, ինչպես Արշակունիները (նաև Սասանյանները), պատերազմել է գարնանից մինչև խոր աշուն, իսկ ձմռան շեմին ետ է դարձել տուն, զորքը ցրել՝ մինչև գարուն կամ մինչև հաջորդ զորակոչի առիթը[41]: Ինքը՝ Օդենատոսը (ինչպես նաև՝ հռոմեացիները), բավարար ուժեր չի ունեցել և առանց հայերի աջակցության չէր կարող պատերազմել կամ պատերազմը շարունակել նաև ձմռանը, եթե նույնիսկ ցանկանար: Եվ, քանի որ Խոսրով Երրորդ Մեծը ձմռան դեմ վերադարձած է եղել իր երկիր և զորքը ցրած՝ մինչև գարնանային զորահավաքը, որի մասին վկայում է Ագաթանգեղոսը, ապա Օդենատոսը նույնպես նրա նման պետք է վարվեր:

Օդենատոսը սպանվել է 267 թ. ձմռանը՝ դեկտեմբերին, կամ 268 թ. հունվարի սկզբին: Իսկ կրոնական ծեսը (տոնախմբությունը), որին նա մասնակցել է և որի ժամանակ սպանվել, կարող էր լինել զրադաշտական Միհր աստծու ծննդյան օրվան նվիրված, որը նշվել է դեկտեմբերի 25-ին: Նա կարող էր սպանվել նաև Արամազդ աստծուն նվիրված տոներին մասնակցելու կամ դրանք, որպես քուրմ, ղեկավարելու ժամանակ, որոնք կատարվում էին հունվարի սկզբին[42]: Ինչևէ, հայտնի է, որ սպանվելու պահին Օդենատոսը մասնակցելիս է եղել կրոնական արարողությունների: Իսկ տարվա այդ եղանակին նման արարողություններ կարող էին կատարվել միայն վերը թվարկված դեպքերում:

Երեք թագավորների՝ Օդենատոսի, Խոսրով Երրորդ Մեծի և կայսր Գալենոսի սպանության պատճառները, նպատակները, դրդումներն ու կատարման «ձեռագրերը» նույնն են: Նրանք երեքն էլ սպանվել են Իրանի դեմ պատերազմի ամենաթեժ ժա-

---

[40] *Տե՛ս Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 38–39:*

[41] *Տե՛ս* Т. М о м м з е н. *Նշվ. աշխ., էջ 257, 335, 337, Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. նշվ. աշխ., էջ 31:*

[42] *Տե՛ս Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Արամազդ, Երևան, 2006, էջ 8:*

մանակամիջոցում, այդ կերպ հռոմեա-հայկական զորքերի հաղթարշավին վերջ դնելու և այդ զորքը գլխատելու նպատակով: Ազգականների ձեռքով, քանի որ սովորական մարդասպանը նրանց չէր կարող մոտենալ: Նրանք կաշառված են եղել և ինչպես Անակին, այնպես էլ Մեռնիոսին խոստացված է եղել թագավորություն և «պատիվներ»: Պետք է ասել, որ Սասանյանները կատարել են տված խոստումները: Իշխանություններ են ստացել Անակի ազգականները, մասնավորապես՝ վերջինիս որդին և Գրիգոր Լուսավորչի եղբայրը[43]: Մեռնիոսն էլ թագավոր է հռչակվել, բայց կարճ ժամանակով: Նա սպանվել է Օդենատեսի կնոջ՝ Զենոբիայի կողմից, որից հետո իրանական արքունիքի կողմից վերջինս ճանաչվել է Փոքր Ասիայի կայսրուհի:

Այնուհետև Զենոբիան համարյա անմիջապես պատերազմ է սկսել Հռոմի դեմ Իրանի օգնությամբ: Թե ինչու՞ է նա կտրուկ փոխել քաղաքական կողմնորոշումը՝ անցնելով պարսիկների կողմը, պատմագիտության մեջ հստակեցված ու պարզաբանված չէ: Գուցե նա նույնպես եղել է իր ամուսնու դեմ կազմակերպված դավադրության մասնակից: Իսկ միգուցե ամուսնու, հայոց Խոսրով Մեծ թագավորի և Գալենոս կայսեր սպանություններից հետո, Զենոբիան այլևս հույս չի ունեցել, որ Իրանի դեմ հետագա պայքարը կարող է հաջողություն բերել: Հավատալով Իրանի իշխանությունների օգնության խոստումներին՝ անկախ պետություն ստեղծելու գործում, ինչի մասին իրական հիմքեր կան, նա անցել է պարսիկների կողմը: Բոլոր դեպքերում Զենոբիայի կողմից Հռոմին հակադրվելը օգուտ էր պարսկական իշխանություններին: Եվ դա նույնպես ապացույց է, որ վերջիններս մասնակից են եղել Օդենատոսի սպանությանը ու Զենոբիայի թագուհի հռչակելուն:

… Որ Խոսրով Երրորդ Մեծը (որը «Մեծ» տիտղոսը, ինչպես տեսնում ենք, իսկապես էլ վաստակել է արժանիորեն, Իրանի դեմ տարած իր հաղթանակների շնորհիվ) թագավորել է 253–268 թթ. հիմնավորվում է նաև Խորենացու բերած հետևյալ տվյալներով: Նրա սպանությունից անմիջապես հետո հայոց նախարարները, փրկելով և Հռոմ տեղափոխելով թագաժառանգ Տրդատին և շարունակելով պատերազմը Իրանի դեմ, օգնության են կանչել հռոմեական զորքերին ու կատարվածի մասին «իսկույն իմաց տվել Վաղերիանոս կայսրին», այսինքն՝ Գալենոսին, որին Խորենացին այստեղ Վաղերիանոս է կոչում[44]: Բայց վերջինս, կռվելիս լինելով գոթերի դեմ, հանելուկային պայմաններում սպանվել է՝ չկարողանալով հայերին օգնություն ուղարկել: Հայկական պատմագրության մեջ այս Վաղերիանոսին շփոթել են Գալենոսի հայր, Եդեսիայի մոտ գերի ընկած և պարսիկների կողմից սպանված կայսր Վաղերիանոսի (Պուբլիոս Լիկինիոս Վալերիանոս – 253–260 թթ.) հետ: Մինչդեռ Խորենացու գրքի այս հատվածում խոսքը այդ կայսրի որդու՝ Գալենոս Պուբլիոս Լիկինիոս Վալերիանոս Իգնատիոսի (253–268) մասին է: Հենց նա էլ չի հասցրել հայերին ժամանակին

---

[43] *Տե՛ս Հովհան Մամիկոնյան. նշվ. աշխ., էջ 32–33:*

[44] *Տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, 1981, էջ 260:*

օգնել, քանի որ, ինչպես պարզվում է Մ. Խորենացու այս վկայությունից, Դանուբ գետի ափերին կռվելիս է եղել գոթերի դեմ և մահացել է նույն տարում (268 թ.)[45]: Այս կայսրը իսկապես այդ տարվա գարնանից մինչև աշուն կռվել է Դանուբ գետն անցած գոթերի դեմ և օբյեկտիվորեն չէր կարող կատարել հայերի խնդրանքը: Նա չէր կարող Արևելք գնալ, քանզի Իտալիայում և այլուր զահի շուրջ 19 հավակնորդներ ապստամբություններ էին բարձրացրել ու իրենց կայսր հայտարարել: Եվ նա դանուբյան ճակատից Իտալիայի հյուսիս էր եկել՝ նրանցից ամենավտանգավորների դեմ պայքարելու համար: Այնտեղ էլ սպանվել է այդ նույն տարվա՝ 268 թվականի վերջում[46]: Խորենացու վերոնշած վկայությունը խիստ կարևոր է: Դա վկայում է այն մասին, որ կայսր Գալենոս Վալերիանոսը (Վալերիանոս) եղել է ոչ միայն Օդենատոսի, այլև հայոց թագավորի դաշնակիցը: Եվ որ նրանց դաշնակցությունը ունեցել է երեք կողմ և ոչ թե երկու, ինչպես որ գործը ներկայացնում են կողմնակալ ու աչառու հռոմեական պատմիչները[47]: Հասկանալի է նաև, որ Խորենացին իսկապես էլ գրում է Գալենոսի (Գաղիանոս), և ոչ թե նրա հայր Պուբլիոս Լիկինիոս Վալերիանոսի մասին, որը Դանուբի ափերին չի կռվել և Իտալիայի հյուսիսում էլ չի զոհվել, այլ զոհվել է Իրանում և այլ ժամանակ, պարսիկների գերության մեջ գտնվելիս, որի մասին արդեն իսկ ասվել է:

Այսպիսով, Գալենոս Վալերիանոս կայսրը նույնպես չի զոհվել պատերազմում: Նա սպանվել է իր զորքի ճամբարում՝ իր վրանում, հանգստի ժամանակ և դավադրաբար: Նրա մահվան ժամանակը հռոմեական պատմագրության մեջ հայտնի է և չի վիճարկվում: Դա 268 թվականի խոր աշունն է: Այդ սպանության հանգամանքներն ու կատարողի անունը անհայտ են: Ենթադրվում է, որ նրա սպանությունը կազմակերպել է զահի հավակնորդներից որևէ մեկը, բայց ո՞վ՝ պարզ չէ[48]: Սակայն, կարծում ենք, որ դրա պատճառը եղել է պարսկական պատերազմի դադարեցումը, որն ակնհայտ է այս շարադրանքի տրամաբանությունից: Գալենոս Վալերիանոս կայսրը նույնպես դարձել է Հռոմի զահի այնպիսի հավակնորդի զոհ, որը կապ է ունեցել Իրանի արքունիքի հետ և որին պարսիկները դրդել են ապստամբության՝ կրկին թագավորության խոստումով:

Այսպիսով, Օդենատոսը, Խոսրով Երրորդ Մեծը և Գալենոս Վալերիանոսը սպանվել են համարյա միևնույն ժամանակ և դավադրաբար: Իսկ դավադրության կազմակեպումը, որը նկարագրում է Ագաթանգեղոսը, վերաբերել է ոչ միայն Խոսրով Երրորդ Մեծի, այլև այս տիրակալների սպանությանը: Նրա նկարագրածի ու այս սպանությունների կապն ակնհայտ է: Եվ դա նույնպես անհերքելի ապացույց է այն բանի,

---

[45] *Տե՛ս Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, 1981, էջ 260–261:*

[46] *Տե՛ս* Ն. Гиббон. Упадок и разрушение Римской империи. М., 2005, с. 110–142, 951.

[47] *Տե՛ս* М. Грант. *Նշվ. աշխ., էջ 156–159:*

[48] *Տե՛ս* Э. Гиббон. *Նշվ. աշխ., էջ 125:*

որ Խոսրով Մեծի մահվան տարեթիվը 268 թվականն է: Դա էլ, հետևաբար, Տրդատ (Տիրիդատ) Երրորդ Մեծին Հռոմ տանելու տարեթիվն է:

Որ Խոսրով Երրորդ թագավորը գահակալել է մինչև 268 թ., իսկ նրա որդի Տրդատ (Տիրիդատ) Երրորդը բավական ուշ՝ սկսած 282 թ. (և ոչ թե 297 կամ 298 թվականներից, ինչպես երբեմն ենթադրվում է), երբ հասած է եղել չափահասության և կարող էր թագավորել (որը, ըստ զրադաշտական իրավունքի, 15 տարեկանն է) հիմնավորվում է նաև Խորենացու ներկայացրած հռոմեական կայսրերի հետևյալ ժամանակագրությամբ, որն աչքի է ընկնում հազվագյուտ ճշգրտությամբ: Ըստ Խորենացու այդ ժամանակագրության (որը նա կազմել է Խոսրով Երրորդի և Տրդատ (Տիրիդատ) Երրորդի գահակալման ժամանակն ավելի որոշակի դարձնելու համար)՝ հռոմեական գահի վրա այս Գալենոս Վալերիանոսից հետո (որը հիշատակվել է որպես Դանուբ գետի ափերին գոթերի դեմ մարտնչող Վաղերիանոս), «արագ-արագ իրար հաջորդելով», թագավորել են՝ Կլավդիոս Երկրորդը (Մարկոս Ավրելիոս Վալերիոս Կլավդիոս Երկրորդ – 268–270), Ավրեղիանոսը (Կվինտիլոս Մարկոս Ավրելիանոս Կլավդիոս, որը 270 թ. դարձավ կայսր, թագավորեց 17 օր և սպանվեց իր զինվորների կողմից), մյուս Ավրեղիանոսը (Ավրելիանոս Մուցիոս Դոմիցիոս – 270–275), Տակիտոսը – 275–276), Փրոբիանոսը (Ֆլորիանոս Մարկոս Աննիոս՝Տակիտոսի եղբայրը, որը թագավորել է վեց ամիս 276 թվականին և ինքնասպանություն գործել՝ լսելով, որ զորքը կայսր է ընտրել Պրոբոսին): Հենց Պրոբոսն էլ (Պրոբոս Մարկոս Ավրելիոս – 276–282), ըստ Մ. Խորենացու, «Արտաշիրի հետ խաղաղություն կնքելով՝մեր երկիրը բաժանել է, սահմանացույց փոսեր կտրելով»[49]: «Փոսեր կտրելով» Մեծ Հայքը բաժանելը կարող էր լինել 276 թ., քանի որ Պրոբոսն այդ թվականին է դարձել կայսր, որից հետո հեռացել է Արևելքից և այլևս այնտեղ չի վերադարձել: Եվ քանի որ Որմիզդ-Արտաշիրն էլ, դառնալով ամբողջ Իրանի թագավոր, մահացել է 273 թ., ապա Պրոբոսն այդ պայմանագիրը, որը, անկասկած, պատմական իրողություն է, կնքել է կա՛մ Իրանի թագավոր Վահրամ (Վռամ, Վարախռան, Բահրամ) Առաջինի (273–276), կա՛մ էլ Վահրամ Երկրորդի հետ (276–293), որոնք նույնպես, ըստ Սասանյանների սովորույթի, կրելիս են եղել նաև Արտաշիր անունը (ինչպես Արշակունիները՝ Արշակ անունը): Այդ կերպ խաղաղություն ապահովելով՝ Պրոբոսն Արևելքից գնացել է Եվրոպա, որտեղ օրհասական պատերազմ էր մղվում գոթերի դեմ:

Ամփոփելով՝կարելի է հանգել այն եզրակացության, որ Տրդատ Երկրորդ Արշակունին թագավորել է Մեծ Հայքի միայն արևմտյան կամ հռոմեական մասում: Նա մահացել է 252-ից 257 թվականներն ընկած ժամանակամիջոցում, Զրմեռում, որը Մեծ Հայքի արևմտյան մասում գտնվող մի ավան էր՝ միացված Հռոմեական կայսրությանը (Փոքր Հայքին): Նրան հաջորդել է որդին՝Խոսրով Երրորդ Մեծը, որը մինչ

[49] *Տե՛ս Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Հայոց պատմություն, 1981, էջ 260:*

այդ էլ ակտիվորեն ներգրավված է եղել Սասանյանների դեմ մղվող պայքարում: Նա շարունակել է պատերազմը՝ դաշնակցելով հռոմեական կայսեր Գալենոսի և Պալմիրայի ու Արևելքի թագավոր Օդենատոսի հետ: Պատերազմը դադարեցնելու այլ միջոց չգտնելով՝ պարսկական արքունիքում, Որմիզդ-Արտաշիր Սասանյան թագավորի գլխավորությամբ կազմակերպվել է դավադրություն՝ այս տիրակալներին ոչնչացնելու համար, որն իր «Հայոց պատմություն» գրքում նկարագրել է Ագաթանգեղոսը: Դավադրության հետևանքով 267/268 թթ. ընթացքում Օդենատոսը, Խոսրով Երրորդ թագավորը և Գալենոսը սպանվել են, իսկ մեծ պատերազմի հերթական դրվագն ավարտվել է Իրանի հաղթանակով:

ВОПРОС О ВРЕМЕНИ ЦАРСТВОВАНИЯ И ГИБЕЛИ ХОСРОВА ТРЕТЬЕГО ВЕЛИКОГО АРШАКУНИ

САМВЕЛ ХАЧАТРЯН

Резюме

Хосров Великий Аршакуни – отец Тиридата Великого, царствовал с 253-го по 268 г. и погиб в результате заговора. Этот заговор был организован сенатом (атьяном) Ирана, заседавшим под руководством Вормизда (Ормазда)-Арташира – сына царя царей Ирана Шапура Первого. Вормизд-Арташир являлся наместником западного Ирана и командовал иранской армией в войне с армянскими и римскими войсками. Он был также царем Великой Армении с 253-го по 256/257 г., а затем, после гибели Хосрова Великого, с 268-го до 272 г. включительно.

На этом же заседании сената было решено устранить командующего римскими войсками, царя Пальмиры Одената и римского императора Галлиена (Галлен Публий Лициний Валериан Игнаций, 253–268 гг.). Вормизд-Арташир и сенат Ирана организовали этот заговор с целью изменения хода войны и спасения Ирана от полного поражения. Хосров Третий Великий, Оденат и Галлиен погибли от рук заговорщиков почти одновременно: Оденат – зимой 267/268 г., Хосров Третий Великий – весной 268 г., а Галлиен – осенью 268 г. Оденат и Хосров Третий Великий были убиты родственниками, убийца Галлиена неизвестен.

THE ISSUE OF THE TIME OF THE REIGN AND DEATH OF KHOSROW THE GREAT ARSHAKUNI

SAMVEL KHACHATRYAN

Summary

Khosrow the Great Arshakuni – the father of Tiridates the Great reigned exactly from 253 to 268 and died as a result of a plot, which was organized by the Senate of Iran presided by Vormizd (Ormazd)- Artashir, the son of the King of kings of Iran Shapur I. Vormizd-Artashir was the vicar of Western Iran and was in command of the Iranian army in the war with the Armenian and Roman troops. He was also the king of Great Armenia from 253 to 256/257, and then, after the death of Khosrow the Great – from 268 to 272 inclusively.

During this session of the Senate it was decided to eliminate the Commander of Roman troops the king of Palmyra Odaenathus and the Roman Emperor Gallien (253–268). Vormizd-Artashir and the Iranian Senate organized this plot in order to change the course of the war and save Iran from total defeat. Khosrow the Great, Odaenathus and Gallien were killed by conspirators almost simultaneously: Odaenathus – in the winter of 267/268, Khosrow the Great – in the spring of 268 and Gallien – in the fall of 268. Odaenathus and Khosrow III were killed by their relatives, and the killer of Gallien is not known.